79 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը
1.	Թեհրանը Իրանի մայրաքաղաք հռչակելը	1.	1653թ.	1.	Լուի Նապոլեոն
2.	Սահմանադրության ընդունումն Անգլիայում անկախականների կողմից	2.	1775թ.	2.	Աղա Մոհամմադ խան
3.	Ազատ ձեռներեցության մասին օրենքի ընդունումը Ռուսաստանում	3.	1852թ.	3.	Օ. Կրոմվել
4.	Կայսրության վերականգնումը Ֆրանսիայում	4.	1795թ.	4.	Եկատերինա II

1)

1	3	2
2	2	1
3	4	3
4	1	4

2)

1	2	4
2	4	1
3	1	3
4	3	2

3)

1	4	2
2	1	3
3	2	4
4	3	1

4)

1	2	1
2	3	4
3	1	3
4	4	2

80 **Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել ուղղությունների հետ.**

1. Է. Կիրխներ
2. Գ. Սներինի
3. Վ. Վազարելի
4. Վ. Կանդինսկի
5. Ժ. Բրակ

ա. կուբիզմ
բ. էքսպրեսիոնիզմ
գ. ֆուտուրիզմ
դ. օպ-արթ
ե. աբստրակցիոնիզմ
զ. էքզիստենցիալիզմ

1) 1-ե, 2-բ, 3-ա, 4-գ, 5-զ
2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե, 5-ա
3) 1-ա, 2-ե, 3-բ, 4-զ, 5-դ
4) 1-զ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-ե

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ե՞րբ է կնքվել հաշտության պայմանագիր Եգիպտոսի փարավոն Ռամզես II-ի և խեթական արքա Խաթուսուլիս III-ի միջև.**

1) Ք.ա. 1239թ.
2) Ք.ա. 1279թ.
3) Ք.ա. 1213թ.
4) Ք.ա. 1259թ.

2 **Ե՞րբ է Կոստանդիանոս Մեծի կողմից Արևելք տեղափոխվել Հռոմեական կայսրության մայրաքաղաքը.**

1) 313թ.
2) 395թ.
3) 330թ.
4) 325թ.

3 **Ե՞րբ է Տրապիզոնի կայսրությունը նվաճվել թուրք-օսմանների կողմից.**

1) 1461թ.
2) 1453թ.
3) 1472թ.
4) 1389թ.

4 **Ե՞րբ է ընդունվել ԱՄՆ-ի Սահմանադրությունը.**

1) 1791թ.
2) 1776թ.
3) 1802թ.
4) 1787թ.

5 **Ե՞րբ է կազմավորվել Ավստրո-Հունգարիան.**

1) 1856թ.
2) 1867թ.
3) 1866թ.
4) 1848թ.

6 **Ե՞րբ է կնքվել չհարձակման մասին խորհրդա-գերմանական համաձայնագիրը.**

1) 1938թ. հունիսի 14-ին
2) 1940թ. մայիսի 24-ին
3) 1939թ. սեպտեմբերի 30-ին
4) 1939թ. օգոստոսի 23-ին

7 **Ե՞րբ են հրապարակվել ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի «14 կետերը».**

1) 1920թ.
2) 1921թ.
3) 1918թ.
4) 1922թ.

77 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Գործիչը	#	Տարեթիվը
1.	Պայմանագրի կնքումը Հռոմի և Սելևկյանների միջև	1.	Դիոկղետիանոս	1.	Ք.հ. 476թ.
2.	Պիլոս քաղաքի գրավումն աթենացիների կողմից	2.	Ալեքսանդր Մակեդոնացի	2.	Ք.ա. 188թ.
3.	Դոմինատի սկիզբը	3.	Դեմոսթենես	3.	Ք.ա. 425թ.
4.	Գրանիկոսի ճակատամարտը	4.	Օդոակր	4.	Ք.հ. 284թ.
5.	Վերջին հռոմեական կայսեր գահընկեցությունը	5.	Անտիոքոս III	5.	Ք.ա. 334թ.

1)

1	3	4
2	1	5
3	2	3
4	5	1
5	4	2

2)

1	5	2
2	3	3
3	1	4
4	2	5
5	4	1

3)

1	2	5
2	1	3
3	5	4
4	3	1
5	4	2

4)

1	4	3
2	2	4
3	3	5
4	1	2
5	5	1

78 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակին.**

1. «Երրորդություն»
2. «Ֆրանկների պատմությունը»
3. «Դեկամերոն»
4. «Վեներայի ծնունդը»
5. «Գոթերի պատմությունը»

ա. Ջովաննի Բոկաչչո
բ. Կասիոդոր
գ. Անդրեյ Ռուբլյով
դ. Գրիգորիոս Տուրացի
ե. Ս. Բոտիչելլի
զ. Բոեցիոս

1) 1-զ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-բ
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-ա, 5-զ
3) 1-ե, 2-զ, 3-բ, 4-գ, 5-դ
4) 1-զ, 2-գ, 3-դ, 4-բ, 5-ե

74 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Վաշինգտոնյան խորհրդաժողովի հետևանքներ.**

ա. Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հաստատվում էր կայունություն:
բ. Համաձայնեցվում էին հինգ առաջատար երկրների վերջրյա ծովային նավատորմների չափաբաժինները:
գ. Ի հաշիվ Գերմանիայի՝ տարածքային շոշափելի ձեռքբերումներ էր ունենում Լեհաստանը:
դ. Վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները Չինաստանում:
ե. Չինաստանում հռչակվում էր մեծ տերությունների համար «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքը:
զ. Ճապոնիայի ռազմա-ծովային ուժերը կրկնապատկվում էին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համեմատությամբ:
է. Չինաստանը կորցնում էր իր ինքնիշխանությունը, իսկ տարածքը մասնատվում էր:

1) ա,բ,դ,ե
2) բ,գ,զ,է
3) ա,դ,ե,զ
4) ա,բ,դ,զ

75 **Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության.**

ա. Կալիաս
բ. Կլիսթենես
գ. Նաբուգոդոնոսոր II
դ. Դեմոսթենես
ե. Պերսևս
զ. Թեմիստոկլես
է. Սելևկոս
ը. Փիլիպոս II
թ. Անտիոքոս III
ժ. Դարեհ III

1) գ,բ,զ,ա,դ,ը,ժ,է,թ,ե
2) դ,գ,ժ,ա,բ,ե,թ,է,զ,ը
3) գ,ա,բ,զ,ը,դ,է,ժ,ե,թ,
4) ա,ե,գ,բ,զ,դ,թ,ժ,ը,է

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Շենգենյան համաձայնագրի ուժի մեջ մտնելը
բ. Խորհրդա-ֆիննական պատերազմը
գ. Տնտեսական փոխօգնության խորհրդի ստեղծումը
դ. Ֆրանսիայի անդամակցության դադարեցումը ՆԱՏՕ-ի ռազմական կառույցին
ե. Բեռլինի պատի կառուցումը
զ. ԱՄՆ-ի կողմից ճապոնական Հիրոսիմա քաղաքի վրա ատոմային ռումբի նետումը
է. Իտալիայի դուրս գալը Ազգերի լիգայի կազմից
ը. Ջ. Քենեդու ԱՄՆ-ի նախագահ ընտրվելը
թ. խորհրդա-իրանական պայմանագիրը
ժ. Էլիզաբեթ II-ի գահ բարձրանալը

1) թ,է,բ,զ,գ,ժ,ը,ե,դ,ա
2) ե,բ,գ,դ,ժ,ա,է,ը,թ,զ
3) բ,թ,ե,ա,ը,ժ,գ,դ,զ,է
4) է,թ,զ,բ,ժ,գ,ե,ը,դ,ա

8 **Ի՞նչ էր Դարեհ III-ի անունը նախքան Աքեմենյան արքայից արքա դառնալը.**

1) Արգամ
2) Արշամ
3) Արշակ
4) Արտաշես

9 **Ինչպե՞ս էր կոչվում Սպարտայի ավագների խորհուրդը.**

1) տրիտիա
2) էկլեսիա
3) գերուսիա
4) ապելլա

10 **Ու՞մ էր վերապահվում կայսեր տիտղոսը Վերդենի 843թ. դաշնագրով.**

1) Լյուդովիկոս Բարեպաշտին
2) Լյուդովիկոս Գերմանացուն
3) Լոթարին
4) Կարլոսին

11 **Ո՞ր փաստաթղթով է անգլիական խորհրդարանին հանձնվել օրենսդրական իշխանությունը.**

1) «Առաջարկությունների գլուխներ»
2) «Կառավարման միջոց»
3) «Ժողովրդական համաձայնություն»
4) «Իրավունքների օրենք»

12 **Որքա՞ն էր Առաջին աշխարհամարտի տարիներին զոհված զինվորների թիվը.**

1) 27 միլիոն
2) 20 միլիոն
3) 10 միլիոն
4) 15 միլիոն

13 **Ո՞ր խորհրդաժողովում է դրվել Գերմանիայի դեմ Եվրոպայում երկրորդ ճակատի բացման խնդիրը.**

1) Թեհրանի
2) Յալթայի
3) Լոնդոնի
4) Պոտսդամի

14 **Ո՞ր քաղաքում է տեղի ունեցել Վարշավայի պայմանագրի կազմակերպության լուծարումը.**

1) Մոսկվայում
2) Վարշավայում
3) Պրահայում
4) Բեռլինում

15 **Տալ «լիթուրգիա» բառի հայերեն բացատրությունը.**

1) «վիճակահանություն»
2) «ընծայաբերում»
3) «բողոքարկում»
4) «վարձատրություն»

16 **Տալ «բյուրգեր» տերմինի բացատրությունը.**

1) «քահանա»
2) «մանր ավատատեր»
3) «իշխանազն»
4) «հարուստ քաղաքացի»

17 **Եգիպտական փարավոններին դասավորել ըստ գործունեության հաջորդականության.**

ա. Թութմոս III
բ. Ամենհոտեպ IV
գ. Ռամզես II
դ. Յահմոս I

1) բ,գ,դ,ա
2) ա,գ,դ,բ
3) գ,ա,բ,դ
4) դ,ա,բ,գ

18 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Վերդենի դաշնագիրը Ֆրանկական կայսրության բաժանման մասին
բ. Կոմնինոսների արքայատոհմի կառավարման սկիզբը Բյուզանդիայում
գ. Վորմսի համաձայնագիրը և ինվեստիտուրայի համար պայքարի ավարտը
դ. Հռոմի պապի աշխարհիկ պետության առաջացումը

1) բ,գ,ա,դ
2) գ,դ,բ,ա
3) դ,ա,բ,գ
4) ա,դ,բ,գ

19 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Գերմանական կայսրության հռչակումը
բ. Ընտրական առաջին բարեփոխումներն Անգլիայում
գ. Երկրորդ հանրապետության հռչակումը Ֆրանսիայում
դ. Ավստրո-Հունգարիայի Սահմանադրության ընդունումը

1) բ,գ,դ,ա
2) բ,գ,ա,դ
3) բ,դ,ա,գ
4) ա,դ,գ,բ

20 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փահլավիների արքայատոհմի հիմնումն Իրանում
բ. Փարիզի խորհրդաժողովը
գ. «Մյունխենյան գործարքը»
դ. «Հակակոմինտերնյան պակտը»

1) գ,դ,բ,ա
2) ա,գ,դ,բ
3) բ,ա,դ,գ
4) ա,բ,դ,գ

71 **Նշվածներից ո՞րն է «կատար» բառի հայերեն համարժեքը.**

1) «լուսավոր»
2) «մաքուր»
3) «մարտնչող»
4) «կեղտոտ»

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. վերակառուցում
2. դիրիժիզմ
3. ինքնիշխանություն
4. միասնացում
5. հեղափոխություն

ա. Տնտեսական,քաղաքական,սոցիալական կյանքի միջազգայնացման նորագույն ձև:
բ. ԽՍՀՄ-ում 1985-1991թթ. իրականացված վերափոխումների ընդհանրացված անվանումը:
գ. Հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական,որակական փոփոխություն:
դ. Պետության անկախ,ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում:
ե. Երկրորդ աշխարհամարտից հետո Ֆրանսիայում շրջանառության մեջ դրված քաղաքական հասկացություն:
զ. Որևէ պետության քաղաքական ուժի կամ միության ղեկավար,գերիշխող դերը մյուսների նկատմամբ:

1) 1-զ, 2-բ, 3-ա, 4-գ, 5-դ
2) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ե, 5-գ
3) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-գ
4) 1-ա, 2-գ, 3-ե, 4-զ, 5-բ

73 **Նշվածներից որո՞նք են հանդիսանում Սոլոնի բարեփոխումների հետևանքներ.**

ա. Վերացվեց պարտային ստրկությունը:
բ. Ստեղծվեց Աթենական ծովային միությունը:
գ. Մտցվեց օստրակիզմի համակարգը:
դ. Քաղաքացիություն ստացան Աթենքում մշտապես բնակվող օտար պոլիսների ներկայացուցիչները:
ե. Ատտիկայում մտցվեց գույքային ցենզ, ինչը ծանր հարված հասցրեց տոհմատիրական կարգերին:
զ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդը:
է. Կատարվեց դատական բարեփոխում, որի արդյունքում ստեղծվեց ատենակալների դատարան:

1) ա,դ,զ,է
2) ա,բ,գ,զ
3) ա,դ,ե,է
4) բ,դ,ե,զ

68 **Նշված փաստերից ընտրել չորսը, որոնք վերաբերում են Գլխավոր շտատներին.**

ա. Ըստ դասերի Գլխավոր շտատները կազմված էին 3 պալատներից:
բ. Դուքսերն ու կոմսերը սովորաբար չէին մասնակցում շտատների նիստերին:
գ. Գլխավոր շտատների պալատները 2-ն էին՝ Վերին և Ստորին:
դ. Սկզբնական շրջանում Գլխավոր շտատների նիստերին չեն հրավիրել մանր և միջին հողատերերին:
ե. Յուրաքանչյուր պալատ ուներ միայն 1 ձայնի իրավունք:
զ. Բարձրաստիճան ազնվականներին ու հոգևորականներին անձամբ հրավիրում էր թագավորը,իսկ ասպետների և քաղաքացիների ներկայացուցիչներն ընտրվում էին տեղերում:
է. Գլխավոր շտատները հրավիրվում էին թագավորի նախաձեռնությամբ՝ քննարկելու նրան ֆինանսական օժանդակություն ցույց տալու հարցը:

1) բ,գ,ե,զ
2) ա,գ,դ,ե
3) ա,բ,ե,է
4) ա,դ,զ,է

69 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք տեղ են գտել ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումանի 1947թ. Կոնգրեսին հղված ուղերձում.**

ա. Մեծածավալ տնտեսական օգնություն տրամադրել եվրոպական երկրներին:
բ. Ստեղծել արևմտյան երկրների ռազմաքաղաքական խմբավորում՝ ԱՄՆ-ի հովանու ներքո:
գ. ԽՍՀՄ-ի դեմ օգտագործել ատոմային զենքի սպառնալիք, նույնիսկ՝ կիրառել այն:
դ. ԽՍՀՄ-ի սահմանագծի երկայնքով տեղակայել ամերիկյան ռազմակայաններ:
ե. Միավորել ամբողջ անգլոսաքսոնական աշխարհի ուժերը:
զ. Անհրաժեշտության դեպքում ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների դեմ կիրառել զինված ուժեր:
է. Եվրոպայի վրա իջել է երկաթե վարագույրը, իսկ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետություններն ու ժողովուրդները ընկել են «Մոսկվայի վերահսկողության տակ»:

1) ա,գ,դ,է
2) ա,բ,դ,զ
3) բ,դ,ե,է
4) գ,դ,ե,զ

70 **Տերմինները համապատասխանեցնել իրենց նշանակությանը.**

1. թերմ
2. ագորա
3. զիկկուրատ
4. աքվեդուկ
5. բազիլիկ

ա. տաճարային պալատական համալիր Հին Միջագետքում
բ. եռամաս երկայնական ընդարձակ սրահ
գ. քաղաքի հասարակական-առևտրական կենտրոն դասական Հունաստանում
դ. հասարակական բաղնիք Հռոմում
ե. ջրանցույց
զ. միջնաբերդ-սրբավայր

1) 1-գ, 2-բ, 3-զ, 4-ե, 5-ա
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-զ, 5-գ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե, 5-բ
4) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ, 5-դ

21 **Ե՞րբ է Հուլիոս Կեսարը հռչակվել ցմահ դիկտատոր.**

1) Ք.ա. 43թ.
2) Ք.ա. 44թ.
3) Ք.ա. 49թ.
4) Ք.ա. 46թ.

22 **Ե՞րբ է համամոնղոլական համագումարը Թեմուչինին հռչակել ընդհանուր տիրակալ.**

1) 1222թ.
2) 1215թ.
3) 1206թ.
4) 1201թ.

23 **Ե՞րբ է տեղի ունեցել Բարդուղիմեոսյան գիշերը.**

1) 1572թ. օգոստոսի 24-ին
2) 1562թ. օգոստոսի 24-ին
3) 1594թ. մարտի 24-ին
4) 1590թ. հունիսի 24-ին

24 **Ե՞րբ է սահմանադրություն ընդունվել Իրանում.**

1) 1905թ
2) 1904թ.
3) 1906թ.
4) 1911թ.

25 **Ե՞րբ է ԽՍՀՄ-ի նախագահի պաշտոնից Մ. Գորբաչովը հրաժարական տվել.**

1) 1991 դեկտեմբերի 8-ին
2) 1991 դեկտեմբերի 25–ին
3) 1991 դեկտեմբերի 21–ին
4) 1991 դեկտեմբերի 5-ին

26 **Ի՞նչն էր իրերի կեցության սկզբունք համարում Պյութագորասը.**

1) թիվը
2) օդը
3) միտքը
4) հոգին

27 **Ինչպե՞ս կոչվեց Բյուզանդիայից խլված տարածքներում ձևավորված խաչակիրների պետությունը.**

1) Սուսերակիրների թագավորություն
2) Լատինական թագավորություն
3) Խաչակիրների կայսրություն
4) Լատինական կայսրություն

28 **Ի՞նչ նպատակ էր հետապնդում Նիկոլո Մաքիավելու քաղաքական ծրագիրը.**

1) Կաթոլիկ եկեղեցու վերակառուցում
2) Անձնական մենիշխանության հաստատում
3) Միասնական և անկախ Իտալիայի ստեղծում
4) Տիրանալ Հռոմի պապի աթոռին

29 **Ո՞ր պետությունը 1915թ. միացավ գերմանական խմբավորմանը.**

1) Բուլղարիան
2) Իտալիան
3) Ռումինիան
4) Հունաստանը

30 **Ազգերի լիգայի անդամ ո՞ր երկիրը ենթարկվեց Իտալիայի հարձակմանը 1935թ..**

1) Ավստրիան
2) Հունաստանը
3) Եթովպիան
4) Լիբիան

31 **Ո՞րն էր 325թ. Նիկեայի եկեղեցական ժողովի հրավիրման հիմնական պատճառը.**

1) Կանխելու քրիստոնեական եկեղեցու պառակտումն արևելյան և արևմտյան հատվածների:
2) Կանխելու Հռոմեական կայսրության փլուզումը:
3) Վերջ տալու դավանաբանական վեճերին և ամրապնդելու քրիստոնեական եկեղեցու միասնությունը:
4) Լուծելու և իրականացնելու քրիստոնեության տարածման խնդիրը Սասանյան Պարսկաստանում:

32 **Ի՞նչ հետևանք ունեցավ Իրանի նվաճումն արաբների կողմից.**

1) Վերականգնվեց Հայաստանի լիակատար անկախությունը:
2) Զրադաշտականությունը լայնորեն տարածվեց ողջ Արաբական խալիֆայությունում:
3) Բյուզանդական կայսրությունն իր հերթին նվաճեց Իրանին ենթակա հյուսիսային երկրները:
4) Իրանի բնակչության մեծ մասը հետզհետե ընդունեց իսլամը:

33 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. հոների պարտությունը Կատալաունյան դաշտի ճակատամարտում
բ. Կայսր Մարկոս Ավրելիոսի կառավարման ավարտը
գ. Վաղես կայսեր զոհվելը Ադրիանապոլսի ճակատամարտում
դ. Հռոմեական կայսրության բաժանումը կայսր Թեոդոսիոսի կողմից

1) դ,բ,գ,ա
2) բ,գ,դ,ա
3) բ,գ,ա,դ
4) գ,ա,բ,դ

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Նիկեայի նվաճումը թուրք-օսմանների կողմից
բ. Ռուսաստանում առաջին Երկրային ժողովի հրավիրումը
գ. Բաղդադի գրավումը թյուրք-սելջուկների կողմից
դ. Կոստանդնուպոլսի ազատագրումը խաչակիրներից

1) գ,դ,բ,ա
2) բ,գ,ա,դ
3) գ,դ,ա,բ
4) ա,դ,բ,գ

65 **Քաղաքները համապատասխանեցնել երկրներին.**

1. Ումմա
2. Մեմֆիս
3. Դուր-Կարիգալզու
4. Կուսսար
5. Պասարգադ

ա. Եգիպտոս
բ. Խեթական պետություն
գ. Շումեր
դ. Իրան
ե. Բաբելոնիա
զ. Ասորեստան

1) 1-ա, 2-զ, 3-բ, 4-դ, 5-գ
2) 1-զ, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ե
3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ, 5-դ
4) 1-դ, 2-զ, 3-զ, 4-ա, 5-բ

66 **Կատարել համապատասխանեցում.**

#	Իրադարձությունը	#	Տարեթիվը	#	Գործիչը
1.	Սրբազան հռոմեական(Գերմանական) կայսրության առաջացումը	1.	1206թ.	1.	Ինոկենտիոս III
2.	Ալբիգոյան պատերազմների սկիզբը	2.	962թ.	2.	Ալեքսանդր Նևսկի
3.	Առաջին համամոնղոլական դուրուլթայը	3.	1240թ.	3.	Օտտոն I
4.	Շվեդների պարտությունը Նևայի մոտ	4.	1209թ.	4.	Թեմուչին

1)

1	3	2
2	1	4
3	4	1
4	2	3

2)

1	1	2
2	4	3
3	3	1
4	2	4

3)

1	4	1
2	3	4
3	2	3
4	1	2

4)

1	2	3
2	4	1
3	1	4
4	3	2

67 **Նշված փաստերից ընտրել երեքը, որոնք վերաբերում են Եգիպտոսի Նոր թագավորության դարաշրջանին.**

ա. Ստեղծվեց խոշոր բանակ, որի մեջ կարևոր տեղ էին գրավում մարտակառքերի ջոկատները և վարձկանները:
բ. Եգիպտոսում հաստատվեց հարևան Քուշի տիրակալների իշխանությունը.
գ. Փորձ արվեց կրոնական լուրջ բարեփոխումների շնորհիվ կրճատել Ամոնի քրմության քաղաքական ազդեցությունը:
դ. Կնքվեց եգիպտա-խեթական պայմանագիր, որով կողմերը պարտավորվում էին վիճելի բոլոր հարցերը լուծել խաղաղ միջոցներով, իսկ օտար հարձակման դեպքում՝ օգնել միմյանց:
ե. Գյուղացիական կրկնվող ապստամբությունների հետևանքով թուլացած Եգիպտոսը նվաճվեց հիքսոսների կողմից:

1) ա,գ,դ
2) բ,գ,ե
3) ա,բ,դ
4) ա,գ,ե

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Պիպին Կարճահասակի թագադրվելը
բ. Օտտոն I-ի հաղթանակը հունգարների դեմ
գ. Քլոդվիգի մահը
դ. Սաքսոնիայի նվաճման ավարտը Կարլոս Մեծի կողմից
ե. Կարլոս Մեծի թագավոր հռչակվելը

1) ա,գ,ե,դ,բ
2) բ,ա,ե,գ,դ
3) դ,բ,ե,ա,գ
4) գ,ա,ե,դ,բ

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Մեծ Բրիտանիա անվան հանդես գալը
բ. Ապստամբ ժողովրդի կողմից միապետության տապալումը Ֆրանսիայում
գ. Ճորտատիրության վերացումը Ռուսաստանում
դ. «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» ընդունումը
ե. Աղա Մոհամմադ խանի թագադրումը որպես Իրանի շահ
զ. Դեկաբրիստների ապստամբությունը Ռուսաստանում
է. Դիրեկտորիայի ավարտը
ը. Վիեննայի ապստամբությունը
թ. Հռոմը Իտալիայի մայրաքաղաք հռչակվելը
ժ. Ենիչերիական ստորաբաժանումների վերացումը սուլթան Մահմուդ II-ի կողմից

1) ե,բ,ա,զ,դ,գ,թ,ժ,ը,է
2) բ,ա,ե,դ,զ,է,ը,ժ,թ,գ
3) ա,դ,բ,ե,է,զ,ժ,ը,գ,թ
4) է,ա,գ,ժ,ը,թ,ե,դ,բ,զ

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.«Իրավարար վճռի սահմանափակումը Հաշտության պայմանագրի 89-րդ հոդվածում նշված չորս նահանգներով կարծես պարտավորեցնում ու պարտադրում է…»:**

1) Հ. Թրումանը
2) Թ. Ռուզվելտը
3) Վ. Վիլսոնը
4) Շ. դը Գոլը

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.«Դուրս գալով անախորժություններով լի այս ժամանակներից՝ մեր հինգերորդ նպատակը կլինի նոր աշխարհակարգը, որը կարող է ի հայտ գալ իբրև նոր դարաշրջան…»:**

1) Մ. Թեթչերը
2) Մ. Գորբաչովը
3) Ռ. Ռեյգանը
4) Ջ. Բուշ Ավագը

35 **Ու՞մ են պատկանում հետևյալ խոսքերը. «Բայց, այնուամենայնիվ, երկիրը պտտվում է».**

1) Կոպեռնիկոսին
2) Գալիլեյին
3) Ջորդանո Բրունոյին
4) Վեզալիուսին

36 **Ո՞ր գործիչն է հետևյալ կերպ որակել Երկրորդ աշխարհամարտի արդյունքները. «Հաղթանակ և ողբերգություն».**

1) Շարլ դը Գոլը
2) Ֆ. Ռուզվելտը
3) Ու. Չերչիլը
4) Ի. Ստալինը

37 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ֆ. Վոլտեր
2. Դ. Հյում
3. Ֆ. Շիլլեր
4. Գրոտիուս
5. Պ. Վերրի

ա. Անգլիա
բ. Գերմանիա
գ. Հոլանդիա
դ. Ֆրանսիա
ե. Շվեդիա
զ. Իտալիա

1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա, 5-բ
2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ
3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ, 5-զ
4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-զ, 5-դ

38 **Պետական գործիչներին համապատասխանեցնել իրենց պաշտոնների հետ.**

1. Սայոնի
2. Օոլանդո
3. Վիլսոն
4. Կլեմանսո

ա. Իտալիայի վարչապետ
բ. ԱՄՆ-ի նախագահ
գ. Ճապոնիայի վարչապետ
դ. Ֆրանսիայի վարչապետ
ե. Մեծ Բրիտանիայի վարչապետ

1) 1-ա, 2-գ, 3-ե, 4-բ
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-գ
3) 1-գ, 2-բ, 3-ե, 4-ա
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

39 **Ու՞մ կողմից գահընկեց արվեց Արևմտյան Հռոմեական կայսրության վերջին կայսր Հռոմուլոս Ավգուստուլոսը.**

1) Իտալիայում գտնվող վարձու զորքերի հրամանատար Օդոակրի կողմից
2) վեստգոթերի առաջնորդ Ալարիխի կողմից
3) Բյուզանդիայի կայսր Զենոնի կողմից
4) ֆրանկների թագավոր Քլոդվիգի կողմից

40 **Ո՞ր քաղաքում է կայացել հիտլերյան հանցագործների դատավարությունը.**

1) Մյունխենում
2) Բեռլինում
3) Պոտսդամում
4) Նյուրնբերգում

41 **Ո՞րն էր 1870-1871թթ.Գերմանիայի դեմ պատերազմում Ֆրանսիայի կրած պարտության գլխավոր հետևանքը.**

1) Ֆրանսիան վերածվեց Գերմանիայից կախյալ երկրի:
2) Ֆրանսիայում վերականգնվեցին հանրապետական կարգերը:
3) Ֆրանսիան կորցրեց ազգային անկախությունը:
4) Նորաստեղծ Գերմանական կայսրությանն անցավ Ֆրանսիայի հյուսիսը:

42 **Ի՞նչ հետևանք ունեցավ 1938թ. մարտին գերմանական զորքերի մուտքը Ավստրիա.**

1) Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային:
2) Սկսվեց Երկրորդ աշխարհամարտը:
3) Որպես ինքնուրույն պետություն Ավստրիան դադարեց գոյություն ունենալ:
4) Ավստրիայի մի շարք շրջաններ տրվեցին Գերմանիային,Հունգարիային և Չեխոսլովակիային:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Քերոնեայի ճակատամարտը
բ. Պունիկյան պատերազմների ավարտը
գ. Աթենական նավատորմի արշավանքը Սիցիլիա
դ. Սուլլայի կողմից Հռոմի գրավումը
ե. Իսթմոսի ճակատամարտը և Աքայան միության պարտությունը

1) գ,ա,բ,ե,դ
2) բ,ա,դ,ե,գ
3) գ,ա,ե,բ,դ
4) ա,գ,ե,դ,բ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. «Վարդերի հեղափոխությունը » Վրաստանում
բ. «Կակաչների հեղափոխությունը» Ղրղզստանում
գ. «Նարնջագույն հեղափոխությունը» Ուկրաինայում
դ. Ռուս-վրացական պատերազմը

1) ա,դ,բ,գ
2) գ,ա,դ,բ,
3) ա,գ,բ,դ
4) դ,ա,գ,բ

58 **Նշվածներից որո՞նք են աշխարհագրական մեծ հայտնագործությունների հետևանքներ.**

ա. Հայտնագործվեցին մինչ այդ անհայտ մայրցամաքներ, զարգացավ գիտությունը:
բ. Վերացվեց Օսմանյան կայսրությունը՝ որպես խոչընդոտ Հնդկաստան տանող ճանապարհին:
գ. Եվրոպայի կապերը Ասիայի, Աֆրիկայի ու Ամերիկայի հետ դարձան մշտական և բազմաբնույթ:
դ. Առաջացան առաջին եվրոպական գաղութները:
ե. Եվրոպայից նոր հայտնագործված երկրներ արտահանվեցին հսկայական նյութական հարստություն և արժեքներ:
զ. Եվրոպացիները կործանեցին մի շարք հին քաղաքակրթություններ, խախտեցին այդ երկրների և ժողովուրդների բնականոն զարգացումը:

1) բ,գ,դ,ե
2) բ,գ,ե,զ
3) ա,գ,դ,ե
4) ա,գ,դ,զ

59 **Բերված փաստարկներից ընտրել չորսը, որոնք հանդիսանում են Ռուսաստանի Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու պատճառ.**

ա. Ավստրո-Հունգարիայից գրավել Ադրիատիկ ծովի հյուսիսային ափերը:
բ. Զավթել Բոսֆորի և Դարդանելի նեղուցները:
գ. Ջախջախել Գերմանիային և Ավստրո-Հունգարիային:
դ. Մասնատել Օսմանյան տերությունը, զավթել Արևմտյան Հայաստանը, հասնել Միջերկրական ծով:
ե. Օսմանյան տերությունը, գրավել Միջագետքը, Պաղեստինը, Արաբիան:
զ. Նվաճել Ավստրո-Հունգարիայի կազմում գտնվող Գալիցիան:
է. Դուրս գալ Աֆրիկայի հյուսիսային ափեր:

1) ա,գ,դ,ե
2) ա,դ,ե,զ
3) գ,ե,զ,է
4) բ,գ,դ,զ

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Փարավոն Թութմոս III-ի թագավորությունը
բ. Խեթական տերության տրոհումը
գ. Ասորեստանի Թիգլաթպալասար I արքայի կառավարման վերջը
դ. Պայմանագրի կնքումը Ռամզես II-ի և Խաթուսիլիս III-ի միջև
ե. Եգիպտոսի Նոր թագավորության դարաշրջանի սկիզբը

1) դ,ա,ե,գ,բ
2) ե,ա,դ,բ,գ
3) ա,ե,բ,գ,դ
4) բ,ե,ա,դ,գ

55 **Գտնել հասկացությունների համապատասխան բացատրությունները.**

1. «նոր ազգայնականություն»
2. Ռիսորջիմենտո
3. Ազգային կոնվենտ
4. չարտիզմ
5. արդյունաբերական հեղաշրջում

ա. Արդյունաբերական քաղաքակրթության երկրորդ փուլը, երբ արտադրությունը համատարած մեքենայացվում է:
բ. Արմատական զանգվածային շարժում Անգլիայում հանուն տղամարդկանց ընդհանուր ընտրական իրավունքի և հասարակության ազատականացման:
գ. ԱՄՆ-ի նախագահ Թեոդոր Ռուզվելտի բարեփոխումների նախագիծը:
դ. Իտալիայի ազգային միավորմանն ուղղված հզոր հեղափոխական շարժում:
ե. 1792թ. ընտրված Սահմանադիր ժողով Ֆրանսիայում:
զ. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-գ
3) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
4) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

56 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. գաղութ
2. դոմինիոն
3. մանդատ
4. դեկրետ

ա. Խորհրդային Ռուսաստանի օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն մարմինների ընդունած օրենքների անվանում:
բ. Պատմության նոր և նորագույն շրջանում որևէ օտար պետության գերիշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք, որը զրկված է քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունից:
գ. Կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ, որն առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո:
դ. Մինչև 1947թ. Ազգերի բրիտանական համագործակցության անդամ երկրների անվանումը:
ե. Քաղաքական կամ տնտեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ:

1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-ե
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
3) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
4) 1-բ, 2-դ, 3-ե, 4-ա

57 **Որո՞նք են Աշուր քաղաքի վերելքի հիմնական պատճառները.**

ա. Աշուրը գտնվում էր արևելքից արևմուտք և հյուսիսից հարավ տանող առևտրական ուղիների խաչմերուկում:
բ. Աշուրը ստեղծել էր մշտական արհեստավարժ բանակ:
գ. Աշուրն առևտրական գաղութներ էր ստեղծել հումքի աղբյուրներին առավել մոտ՝ հատկապես Փոքր Ասիայում:
դ. Աշուրի շրջակայքը հարուստ էր մետաղական հանքերով:
ե. Աշուրցի առևտրականներն արտահանում էին տեղի արհեստագործական արտադրանքը:

1) ա,գ,դ
2) ա,գ,ե
3) ա,բ,ե
4) բ,դ,ե

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խորհրդա-ֆիննական պատերազմը
բ. Յալթայի խորհրդաժողովը
գ. Պոտսդամի խորհրդաժողովը
դ. Նյուրնբերգի դատավարությունը
ե. Թեհրանի խորհրդաժողովը

1) ե,ա,բ,գ,դ
2) ա,ե,բ,գ,դ
3) բ,դ,ա,ե,գ
4) ա,բ,ե,դ,գ

46 **Համապատասխանեցնել Հռոմի կայսրերին իրենց կառավարման տարեթվերի հետ.**

1. Կլավդիոս
2. Տրայանոս
3. Տիբերիոս
4. Դիոկղետիանոս

ա. 98-117 թթ.
բ. 284-305 թթ.
գ. 41-54 թթ.
դ. 14-37 թթ.
ե. 161-180թթ.

1) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե
2) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ
3) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ

47 **Ստեղծագործությունը համապատասխանեցնել հեղինակի հետ.**

1. «Օթելլո»
2. «Անառակ որդու վերադարձը»
3. «Տիրակալը»
4. «Խորհրդավոր ընթրիք»

ա. Մաքիավելի
բ. Լեոնարդո դա Վինչի
գ. Ուիլյամ Շեքսպիր
դ. Ռեմբրանդտ
ե. Ռուբենս

1) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ե
2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
4) 1-ա, 2-ե, 3-բ, 4-գ

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. Առաջին հանրապետությունը Ֆրանսիայում
2. Սահմանադրական շարժումն Իրանում
3. Թանզիմաթի ժամանակաշրջանն Օսմանյան տերությունում
4. Երկրորդ կայսրությունը Ֆրանսիայում

ա. 1839-1876 թթ.
բ. 1792-1804 թթ.
գ. 1848-1852 թթ.
դ. 1905-1911 թթ.
ե. 1852-1870թթ.

1) 1-բ, 2-դ, 3-գ, 4-ա
2) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ
3) 1-դ, 2-ե, 3-բ, 4-գ
4) 1-բ,2-դ, 3-ա, 4-ե

49 **Պատմական իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ.**

1. Հինդենբուրգի մահը
2. Մուսսոլինիի վարչապետ դառնալը
3. «Մարտական միության» հիմնումը Մուսսոլինիի կողմից
4. Պայմանագրի կնքումը Վատիկանի և Մուսսոլինիի միջև
5. Խորհրդային կարգերի հաստատումը Լիտվայում,Լատվիայում և Էստոնիայում

ա. 1940թ.
բ. 1929թ.
գ. 1922թ.
դ. 1934թ.
ե. 1919թ.
զ. 1939թ.

1) 1-ե, 2-դ, 3-բ, 4-ա, 5-զ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-զ
3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-զ, 5-ե
4) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ, 5-ա

50 **Մշակույթի գործիչների անունները համապատասխանեցնել նրանց գործունեության բնագավառի հետ.**

1. Գ. Կուրբե
2. Օ. Ռոդեն
3. Կ. Դեբյուսի
4. Լ. Բերնինի
5. Է. Պո

ա. քանդակագործ
բ. երաժիշտ
գ. նկարիչ
դ. ճարտարապետ
ե. գրող
զ. դերասան

1) 1-ա, 2-ե, 3-զ, 4-դ, 5-բ
2) 1-ե, 2-բ, 3-գ, 4-զ, 5-ա
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ, 5-ե
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե, 5-դ

Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ.**

1) Դիոկղետիանոսը Հռոմեական կայսրության կենտրոնը տեղափոխեց Բոսֆորի ափին գտնվող Բյուզանդիոն քաղաք:
2) Առաջին Պունիկյան պատերազմի հետևանքով Կարթագենը դադարեց Հռոմի մրցակիցը լինելուց՝ դառնալով վերջինից կախյալ պետություն:
3) Մակեդոնական երկրորդ պատերազմի շնորհիվ Հունաստանը վերականգնեց իր լիակատար անկախությունը:
4) Կոռնելիոս Սուլլայի դիկտատուրան հանրապետական կարգի ճգնաժամի առաջին լուրջ դրսևորումն էր Հռոմում:

52 **Նշված պնդումներից ընտրել չորսը, որոնք վերցված են միջնադարյան սքոլաստների տեսակետներից.**

ա. Հավատի հետ կապված խնդիրները հասկանալու համար անհրաժեշտ է դիմել նաև բանականությանը:
բ. Աշխարհիկ գիտությունները, մասնավորապես՝ անտիկ փիլիսոփայությունը, օգտակար են ճշգրիտ գիտելիքներ ձեռք բերելու համար:
գ. Անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն Սուրբ Գիրքը, այլև այն ամենը, ինչը կապված է մարդու հետ:
դ. Բանականության շնորհիվ ձեռք բերված գիտելիքները երկրորդական են և պետք է ծառայեն հավատին:
ե. Մարդու համար մերժելի է հրաժարվելը երկրային հաճույքներից՝ հանուն անդրշիրիմյան կյանքի:
զ. Ճշմարտությանը հասնելու համար հավատը և բանականությունը պետք է լրացվեն փորձով:
է. Հավատացյալը Սուրբ Գրքին պետք է ծանոթանա ոչ թե եկեղեցու օգնությամբ, այլ՝ ինքնուրույն:

1) գ,ե,զ,է
2) բ,գ,ե,զ
3) ա,գ,ե,է
4) ա,բ,դ,զ

53 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Իրանում ծավալված սահմանադրական շարժման պարտության գլխավոր պատճառը 1911թ. Հյուսիսային Իրանի գրավումն էր ռուսական զորքերի կողմից:
2) Արևելյան հարցն Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրման խնդիրն է, որը նոր ժամանակների միջազգային հարաբերությունների կարևորագույն հարցերից մեկն է:
3) 1853թ. ծագած Արևելյան(Ղրիմի) պատերազմում Օսմանյակ կայսրության հերթական պարտության հետևանքով Բուլղարիան վերականգնեց անկախությունը:
4) Նոր ժամանակների սկիզբն Իրանում համընկնում է Ղաջարների հարստության հաստատման հետ, որը շարունակվեց շուրջ 130 տարի:

54 **Ի՞նչ է ազգայնականությունը.**

1) ժողովրդավարության հաստատմանն ուղղված գաղափարախոսություն
2) հպատակ ազգերին ճուլելու քաղաքականություն
3) ազգերի ազատագրման գաղափարախոսություն
4) հասարակական կարգի բարեբոխումները մերժող գաղափարախոսություն